Մելիք Հովսեփյան

ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԻ ԿՈՄԻՏԵԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ (1964-1985 ԹԹ.)

Բանալի բառեր - Կոմիտե, սփյուռքահայություն, համայնք, գաղթօջախ, խնդիրներ, կապեր, առաջադիմական ուժեր:

ՄՈՒՏՔ

Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե) հիմնադրվել է Հայկական ՍՍՀ մինիստրների խորհրդի 1964 թ. մայիսի 26-ի թիվ 226 որոշմամբ: Ըստ որոշման՝ այն կոչվելու էր «Արտասահմանյան հայրենակիցների հետ մշակութային կապերի հայկական կոմիտե»[1], սակայն հունիսի 25-ի հիմնադիր համագումարում[2] Մ. Սարյանի առաջարկությամբ ստացավ «Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտե» անվանումը[3]: Կոմիտեի նախագահ նշանակվեց Վարդգես Համազասպյանը[4]: Մերձավոր Արևելքի հայկական համայնքների խնդիրներով զբաղվում էր Կոմիտեի՝ Ասիայի ու Աֆրիկայի հայկական գաղթօջախների հետ կապերի բաժինը (Արևելյան երկրների բաժին):

Կանոնադրությամբ Կոմիտեի առջև դրվել էին հետևյալ նպատակներն ու խնդիրները.

1. հաստատել և զարգացնել կապերը սփյուռքահայ գաղթօջախների հետ,
2. գաղթօջախների հայությանը ծանոթացնել հայրենիքի կյանքի, ձեռքբերումների, գիտության ու մշակույթի հետ,
3. գաղթօջախների հայության մեջ սերմանել հայրենասիրություն,
4. ՀՍՍՀ-ի աշխատավորներին ծանոթացնել գաղթօջախների, առաջադիմական կազմակերպությունների, ձուլման դեմ պայքարի և հայրենիք-սփյուռք հարաբերությունների զարգացմանն ուղղված աշխատանքների հետ:

Նշվածին հասնելու համար անհրաժեշտ էր.

1. հաստատել կապեր առաջադիմական, դեմոկրատական ու հայրենասիրական կազմակերպությունների, բարեգործական ու մշակութային միությունների հետ,
2. գաղթօջախներում տարածել հայրենիքի թերթերը,
3. օգնել գաղթօջախներին,
4. գաղթօջախների հրավերով մեկնել արտասահման, ուղարկել տարբեր խմբեր,
5. հայրենիք հրավիրել պատվիրակություններ գաղթօջախներից,
6. աջակցել սփյուռքահայ տուրիստներին,
7. կազմակերպել սփյուռքահայ նկարիչների ցուցահանդեսներ,
8. կազմակերպել գրական երեկոներ,
9. հրատարակել սփյուռքահայ գրողների ստեղծագործությունները[5]:

Իր գործունեության շրջանում Կոմիտեն Մերձավոր Արևելքի երկրներում բախվել է մի շարք խնդիրների, որոնք վերաբերել են խորհրդային ղեկավարության կողմից հարուցված կազմակերպական և գաղափարաբանական սահմանափակումներին,

[1] Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆոնդ 875, ցուցակ 1, գործ 2, թուղթ 1-2:
[2] Տե՛ս նույն տեղում, g. 1, գ. 11, թ. 1-18:
[3] Տե՛ս նույն տեղում, g. 2, գ. 43, թ. 1.
[4] Տե՛ս նույն տեղում, g. 1, գ. 2, թ. 3:
[5] Տե՛ս նույն տեղում, թ. 1-3:

ինչպես նաև համայնքներում տիրող իրավիճակին ու տարածաշրջանում մերթընդմերթ սրվող լարվածությանը:

1. Կազմակերպական խնդիրներ

Կոմիտեի գործունեության տարիներին կուտակված կազմակերպական խնդիրների մասին կարելի է կարծիք կազմել Կոմիտեի 1981-1985 թթ. գործունեության հիմնական ուղղությունների մասին տեղեկանքից: Այդտեղ Կոմիտեն հասցեատերերի ուշադրությունն էր բևեռում մի շարք հարցերի վրա: Մասնավորապես.

1. քիչ են արտասահմանյան ուղևորությունները,
2. գործուղումների հետաձգումների հետևանքով առաջացող փոփոխություններից ֆինանսապես տուժում են սփյուռքահայ «առաջադիմական» կազմակերպությունները,
3. քանի որ Կոմիտեի ներկայացուցիչների տարեկան արտասահմանյան կապերի պլանը հաստատվում էր ԽՍՀՄ-ի՝ Արտասահմանի հայրենակիցների հետ մշակութային կապերի սովետական ընկերությունը՝ «Ռոդինա»-ն, Կոմիտեն դժգոհում էր այն բանից, որ «Ռոդինա»-ի տուրիստական խմբերը կազմելիս ոչ միշտ են հաշվի առնվում Կոմիտեի ծրագրերը, իսկ նշված տուրիստական խմբեի ղեկավարներն էլ երբեմն անտեսում են Կոմիտեի ներկայացուցիչներին,
4. աշխատանքների լավ կազմակերպման համար անհրաժեշտ էր, որ Կոմիտեն ներկայացուցիչներ ունենա ԱՄՆ-ի, Արգենտինայի և Ֆրանսիայի ԽՍՀՄ դեսպանատներում[1]:

Կոմիտեն համարվում էր ԽՍՀՄ-ի՝ Արտասահմանի հայրենակիցների հետ մշակութային կապերի սովետական ընկերության՝ «Ռոդինա»-ի կոլեկտիվ անդամը[2]: Դա Կոմիտեի գործունեության համար հիմնական խոչընդոտներ ստեղծող իրողությունն էր: Գործուղումների ձգձգումներն էլ հիմնականում կապված էին այն իրողության հետ, որ «Ռոդինան» փորձում էր Կոմիտեի գործուղումները հարմարեցնել իր ժամանակացույցին:

Արտասահմանյան գործուղումների պակասը Կոմիտեն փորձում էր լրացնել հայրենիքում սփյուռքահայ համայնքներից պատվիրակություններ ընդունելով: Օրինակ՝ Կոմիտեի գործունեության տարիներին համայնքներից ընդունվել են 250 պատվիրակություն, 865 դպրոցական և 215 մտավորական[3]: Մյուս կողմից՝ սփյուռքահայ համայնքներում աշխատելու սահմանափակ հնարավորությունների հետևանքով Կոմիտեի գործունեության հիմնական առանցքը 1980-ական թթ. սկզբին դարձան համահայկական բնագավառային հավաքները, որոնք նպատակ էին հետապնդում լրացնելու այն բացը, որն առաջանում էր Կոմիտեի ներկայացուցիչների՝համայնքներում աշխատելու հնարավորությունից զրկված լինելու պայմաններում: Այդ նպատակով Կոմիտեն 1980 թ. նոյեմբերի 24-27-ը Երևանում անցկացրեց «Վերածնված հայրենիքը և սփյուռքը, պայքար հանուն խաղաղության և առաջադիմության» նշանաբանով սփյուռքահայ համայնքների ներկայացուցիչների առաջին համահայկական հավաք-համաժողովը, որին մասնակցում էին 100-ից ավելի ներկայացուցիչներ բոլոր սփյուռքահայ համայնքներից, ինչպես նաև ՀԽՍՀ տարբեր բնագավառների գործիչներ[4]: Հիմնական նպատակը Հայրենիք-Սփյուռք կապերի սերտացումն էր ու համագործակցության առավել արդյունավետ մեխանիզմների մշակումը: Բացի այդ Երևանում 1981 թ. կազմակերպվել է արտասահմանի լրատվամիջոցների խմբագիրների հավաք, 1983 թ.՝ սփյուռքահայ գրողների ու ժուռնալիստների հավաք, 1984 թ.՝ սփյուռքահայ մշակութային միությունների ղեկավարների հավաք, 1985 թ.՝ սփյուռքահայ ռադիո-հե-

[1] Տե՛ս նույն տեղում, ց. 14, գ. 8, թ. 8-9:
[2] Տե՛ս նույն տեղում, ց. 16, գ. 1, թ. 1:
[3] Տե՛ս նույն տեղում, ց. 14, գ. 8, թ. 1-5: Տե՛ս նաև ց. 16, գ. 11:
[4] Տե՛ս նույն տեղում, ց. 8, գ. 9, ց. 40, թ. 1-2: Տե՛ս նաև «Սովետական Հայաստան», 1980, № 12, էջ 7-34:

ռուստաժամերի ներկայացուցիչների և մամուլի խմբագիրների խորհրդակցություն[1]: Պետք է նշել սակայն, որ նման միջոցառումները միայն մասամբ էին լուծում խնդիրը, քանի որ դրանց մասնակցում էին սահմանափակ թվով սփյուռքահայ գործիչներ:

Կային Կոմիտեի աշխատանքներին խոչընդոտող մի շարք այլ կազմակերպական խնդիրներ ևս: Պետք է հատկապես նշել, որ Կոմիտեն իրավասու չէր համարվում Հայրենիք-Սփյուռք հարաբերությունների զարգացման համար այնպիսի մի կարևոր ոլորտում, ինչպիսին սփյուռքահայ երիտասարդների ուսման կազմակերպումն ու կրթական խնդիրների կարգավորումն էր ՀՍՍՀ-ում: Նման խնդիրների կարգավորման համար Կոմիտեն դիմողներին ուղղորդում էր դեպի ՀՍՍՀ բարձրագույն և միջնակարգ կրթության մինիստրություն: Ի դեպ, 1960-ական թթ. երկրորդ կեսին հաստատված նոր կարգի համաձայն՝ սահմանվում էր, որ ՀՍՍՀ-ում ուսանել ցանկացող օտարերկրացին պետք է դիմի բնակության պետությունում ԽՍՀՄ դեսպանություն, որի միջոցով նրա փաստաթղթերը պետք է ուղարկվեն ՀՍՍՀ Արտաքին գործերի մինիստրություն՝ քննարկման նպատակով[2]: Դիմումների հիմնական հասցեատեր Կոմիտեն, փաստորեն, զուրկ էր դիմողներին որևէ իրական օգնություն տրամադրելու հնարավորությունից: 1967 թ. Կոմիտեին դիմեցին Սիրիայի որոշ հայկական կազմակերպություններ (ՀԲԸՄ-ի Սիրիայի կրթական հանձնախումբ, Հալեպահայ ուսուցչական միություն)՝ սիրիահայ մի քանի ուսուցիչների հեռակա ուսուցումը ՀՍՍՀ-ում կազմակերպելու խնդրանքով, քանի որ Սիրիայում գործող օրենքով հայկական վարժարանների ուսուցիչները պետք է ունենային Սիրիայի Կրթության նախարարության համար ընդունելի դիպլոմներ, մինչդեռ հայ ուսուցիչներից ոմանք ունեին Մելքոնյան վարժարանի և Երուսաղեմի ու Անթիլիասի դպրեվանքերի վկայականներ, որոնք ընդունելի չէին[3]: Կոմիտեն չկարողացավ լուծել խնդիրը՝ դիմողներին տեղեկացնելով, որ «Եթե գտնում եք, որ Ձեր թեկնածուները մեկ տարում կարող են հանձնել բարձրագույն ուսումնական հաստատություններում անհրաժեշտ բոլոր առարկաները և պետական քննությունները, ապա կարող եք այդ խնդրով դիմել տեղի սովետական հյուպատոսին»[4]: Մյուս կողմից՝ Կոմիտեին այդպես էլ չհաջողվեց հայաշատ համայնքներում ԽՍՀՄ դեսպանատներում ունենալ ներկայացուցիչներ:

Ակնհայտ է, որ նման խնդիրներից էականորեն տուժում էր Կոմիտեի աշխատանքների արդյունավետությունը:

2. Գաղափարաբանական խնդիրներ

Ի սկզբանե Սփյուռքին առնչվող հարցերում խորհրդային իշխանություններն ունեին կողմնակալ մոտեցում: Դեռևս ՀԿ(բ)Կ կենտկոմի նախագահության 1922 թ. ապրիլի 13-ի նիստի որոշմամբ սփյուռքահայերը բաժանվում էին երեք խմբի՝ «դաշնակներ», «դաշնակներից հեռացածներ՝ չեզոքներ» և խորհրդային կարգերը համակրողներ: Նրանցից միայն վերջին երկուսին էր թույլատրվում ներգաղթել և հաստատվել ՀՍԽՀ-ում[5]:

Հետագա տարիներին ևս այդ մոտեցումը պահպանվեց: Կոմիտեի գործունեության տարիներին խորհրդային իշխանություններն արտերկրի հայկական կազմակերպությունները բաժանել են երկու խմբի՝

1. առաջադիմական (կոմունիստներ, հնչակյաններ, ռամկավարներ),
2. ռեակցիոն կամ հետադիմական (դաշնակցականներ):

Ըստ այդ բաժանման էլ հարաբերություններ են հաստատվել բացառապես առաջին խմբում ընդգրկված կազմակերպությունների հետ[6]:

---

[1] Տե՛ս նույն տեղում, g. 14, գ. 8, թ. 1-5: Տե՛ս նաև g. 16, գ. 11:
[2] Տե՛ս նույն տեղում, g. 2, գ. 203:
[3] Տե՛ս նույն տեղում, գ. 294, թ. 23:
[4] Նույն տեղում, թ. 37:
[5] Տե՛ս «Հ. Յ. Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը», պատասխանատու խմբագիր և կազմող պրոֆ. Վ. Ն. Ղազախեցյան, Ե., 1999, էջ 24:
[6] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, g. 1, գ. 6, թ. 1-6:

Երբեմն Կոմիտեն սփյուռքահայ համայնքները բաժանում էր երեք մասի՝

1. առաջադիմական (կոմունիստներ, հնչակյաններ, ռամկավարներ),
2. ռեակցիոն կամ հետադիմական (դաշնակցականներ),
3. չեզոք (որոնք, ըստ տեղեկանքը կազմողների, առավել հակված են դեպի առաջադիմականները)[1]:

Այդ տարանջատումը ակնհայտ էր դառնում մշակութային և այլ խմբերի ուղևորությունների ժամանակ: Պահպանվել է նաև 1985 թ. դեկտեմբերին Սիրիա ուղարկված արվեստագետների խմբին տրված հանձնարարականը, որը հույժ կարևոր է՝ նմանատիպ ուղևորությունների ժամանակ խմբերի իրավունքներին ու պարտականություններին ծանոթանալու համար: Հանձնարարականի մեջ խնդիր էր դրված.

1. հանդիպել «առաջադիմական» կազմակերպությունների, դպրոցների, թատերախմբերի, մարզական ու երիտասարդական միությունների հետ,
2. հանդիպումները պետք է առաջին հերթին կրեն համերգների ու ելույթների բնույթ և միայն անհրաժեշտության պարագայում՝ զրույցների,
3. կրոնական կազմակերպությունների հովանու ներքո գտնվող դպրոցներ և կազմակերպություններ գնալիս նախապատվությունը տալ Հայ առաքելական եկեղեցուն,
4. «ոչ առաջադիմական» կազմակերպությունների հետ պաշտոնական հանդիպումներ չունենալ, բայց նաև չխոչընդոտել միջոցառումներին նրանց ներկայությանը,
5. պաշտոնական հայտարարություններ չանել,
6. խոստումներ չտալ[2]:

Նման սահմանափակումները մեծապես ազդում էին գործուղումների արդյունավետության վրա: Բացի այդ Սփյուռքի նկատմամբ նման ընտրողական մոտեցումը ազդում էր սփյուռքահայության բարոյահոգեբանական վիճակի վրա և Խորհրդային Հայաստանի նկատմամբ ծնում հակասական ընկալումներ:

3. *Համայնքում տիրող իրավիճակից բխող խնդիրներ*

Կոմիտեում ի սկզբանե կարծում էին, որ համայնքներում հնարավոր կլինի «առաջադիմական» ուժերին աջակցելու ճանապարհով հասնել նրանց հաղթանակին առանձին համայնքներում: Այդ նպատակով հարկ էր հատկապես աշխատել չեզոք ուժերի հետ՝ նրանց առաջադիմական ճամբար ուղղորդելու նպատակով: Օրինակ՝ Հալեպի հայ համայնքի վերաբերյալ 1964 թ. տեղեկանքում նշված էր, որ «առաջադիմական» և «չեզոք» ուժերին համախմբելով՝ հնարավոր կլինի տեղի հայկական համայնքի հասարակական կյանքը պաշտոնապես կազմակերպող Ազգային գավառական ժողովում ՀՅԴ-ի նկատմամբ հասնել գերակշռության[3]: Սակայն 1969 թ. գործունեության հաշվետվությունից ակնհայտ է, որ Կոմիտեի ծրագիրն անհաջողության է մատնվել, քանի որ Ազգային գավառական ժողովի նորընտիր անդամների մեծ մասը դաշնակցականներ կամ նրանց համակիրներն էին (Ժողովի 35 անդամներից միայն 5 էր «առաջադիմական»), «չեզոքները» հարել էին ոչ թե «առաջադիմականներին», որոնք 1966 թ. ստեղծել էին «Սիրիայի արաբական հանրապետության առաջադիմական ճակատ», այլ ՀՅԴ-ին: Ուստի Կոմիտեն կարծում էր, որ հարկ է օգնել «Առաջադիմական ճակատ»-ին ԽՍՀՄ գլխավոր հյուպատոսության միջոցով[4]: Պետք է նշել, որ նույն վիճակը ստեղծվել էր նաև Մերձավոր Արևելքի այլ հայկական համայնքերում (Բաղդադ և այլն)[5]:

Կոմիտեի Արևելյան երկրների բաժնի (Ասիայի և Աֆրիկայի երկրների բաժին) 1978 թ. աշխատանքների պլանում նշված խնդիրները լուծելու համար առաջարկված էին համապատասխան ծրագրեր: Ըստ պլանի՝ բաժնի հիմնական նպատակներն էին

---

[1] Տե՛ս նույն տեղում:
[2] Տե՛ս նույն տեղում, g. 16, գ. 18, թ. 9:
[3] Տե՛ս նույն տեղում, g. 1, գ. 6:
[4] Տե՛ս նույն տեղում, g. 4, գ. 34:
[5] Տե՛ս նույն տեղում, g. 8, գ. 36:

բաժնի աշխատանքների աշխուժացումը, համայնքների հետ կապերի ամրապնդումը և «առաջադիմական» շրջանակների դիրքերի ամրապնդմանը նպաստելը[1]: Այդ նպատակով «առաջադիմական» ու «հայրենասիրական» կազմակերպությունների և կուսակցությունների ղեկավարների հետ աշխատանքներ իրականացնելու համար համայնքներից հարկ էր հայրենիք հրավիրել առաջադիմական գործիչների, հայրենակցական միությունների ղեկավարների, գաղթօջախներում հեղինակություն ունեցող անհատների և փոխադարձաբար «առաջադիմական» ուժերի հրավերով ուղարկել արվեստագետների և մտավորականների խմբեր[2]:

Նշված իրողությունների պայմաններում Կոմիտեն փորձ էր կատարում հիմնվելու հատկապես Սոցիալ-դեմոկրատ հնչակյան, Ռամկավար ազատական կուսակցությունների ու Հայկական բարեգործական ընդհանուր միության կառույցների վրա[3]: Պետք է հիշել, որ «առաջադիմական» համարվող ՍԴՀԿ-ն ու ՌԱԿ-ը կառույցներ չունեին Մերձավոր Արևելքի որոշ հայկական համայնքներում, ինչպես օրինակ Բաղդադում[4], որի հետևանքով Կոմիտեի պայքարը այսպես կոչված «հետադիմական» ուժերի դեմ էապես դժվարանում էր:

Մյուս կողմից՝ որոշ երկրներում ՀՅԴ անդամները ծանրակշիռ կապեր ունեին տեղական իշխանությունների հետ, որի պատճառով այդ կուսակցության դեմ պայքարը դառնում էր անհեռանկարային[5]:

Գաղափարական հարթության վրա տիրող նման վիճակը Կոմիտեին ստիպում էր ջանքեր գործադրել այնպիսի խնդիրների լուծման համար, որոնք ոչ միայն չէին նպաստում Հայրենիք-Սփյուռք հարաբերությունների զարգացմանը, այլև ջլատում էին Կոմիտեի առանց այն էլ սակավ մարդուժի հնարավորությունները:

4. Տարածաշրջանային իրողություններից բխող խնդիրներ

Կոմիտեի գործունեության շրջանը համընկավ արաբա-իսրայելական հակամարտության՝ 1960-70-ական թթ. պատերազմական գործողությունների հետ, որի հետևանքով Կոմիտեի աշխատանքներն առանձին համայնքների հետ կաթվածահար եղան: Կոմիտեի՝ այդ տարիների հաշվետվություններում ասվում էր, որ Մերձավոր Արևելքում տիրող անբարենպաստ իրավիճակի պատճառով (արաբա-իսրայելական պատերազմներ) կապերը գրեթե դադարել են տեղի հայկական համայնքների հետ[6]: 1970-80-ականներին գրեթե անհնար էին դարձել հարաբերությունները նաև լիբանանահայության ու իրաքահայության հետ՝ կապված Լիբանանի քաղաքացիական պատերազմի և իրաք-իրանյան հակամարտության հետ[7]: 1980-ական թթ. Կոմիտեի հաշվետվություններում լիբանանահայության և իրաքահայության հետ մշակութային կապերի և այլ աշխատանքների մասին գրեթե ոչինչ հիշատակված չէ:

1982 թ. տեղեկանքում նշվում էր, որ Երուսաղեմը Իսրայելի կողմից լրիվ գրավվելուց հետո տեղի հայ գաղութի կապը հայրենիքի հետ խիստ սահմանափակվել է և իրականացվում է բացառապես Հորդանանի Ազգային մարզական միության միջոցով[8]:

Կոմիտեի խնդիրները, փաստորեն, բազմապատկվեցին նաև տարածաշրջանում առկա հակամարտությունների պատճառով:

Ամփոփելով կարող ենք նշել, որ Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն իր գործունեության առաջին 20 տարիների ընթացքում կարողացավ լայն

---

[1] Տե՛ս նույն տեղում, գ. 157, թ. 1:
[2] Տե՛ս նույն տեղում, թ. 1-3:
[3] Տե՛ս նույն տեղում, g. 2, գ. 116, g. 13, գ. 208, թ. 32-36: Տե՛ս նաև Մելիքսեթյան Հ., Հայրենիք-Սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը (1920-1980 թթ.), Ե., 1985, էջ 408:
[4] Տե՛ս նույն տեղում, g. 13, գ. 208, թ. 32-36:
[5] Տե՛ս նույն տեղում, g. 16, գ. 175, թ. 1-3: 8. 8, գ. 36:
[6] Տե՛ս նույն տեղում, g. 6, գ. 33, թ. 16-19:
[7] Տե՛ս նույն տեղում:
[8] Տե՛ս նույն տեղում, g. 14, գ. 207, թ. 5:

կապեր հաստատել Մերձավոր Արևելքի հայկական համայնքների հետ, սակայն կազմակերպական և գաղափարական սահմանափակումների, ինչպես նաև համայնքում և տարածաշրջանում տիրող իրավիճակի պայմաններում հանդիպեց զգալի խոչընդոտների, որոնք էլ ազդեցին նրա աշխատանքների արդյունավետության վրա:

Мелик Овсепян, О некоторых проблемах деятельности комитета по культурным связям с армянами диаспоры в ближнем востоке (1964-1985 гг.),-Комитет был основан в 1964 году для активизации взаимоотношений с армянами диаспоры. В Ближнем Востоке Комитет столкнулся с серьезными проблемами в организационном и идеологическом направлениях, а также с проблемами, связанными с ситуацией в общинах и в регионе. В организационном плане Комитет не мог самостоятельно решить проблемы, связанные с общинами Диаспоры. Его деятельность в основном зависела от Советского комитета по культурным связям с соотечественниками за рубежом. В идеологическом плане Комитету приходилось сотрудничать только с «прогрессивными» организациями Диаспоры и бороться против Армянской революционной федерации.

Программы Комитета реализовались в соответствии с изменениемситуации в общинах и в регионе.

Ключевые слова: Комитет, армяне Диаспоры, община, колония, проблемы, связи. прогрессивные силы.

Melik Hovsepyan, On some problems of activity of the committee of cultural relations with Diaspora Armenians in the middle east (1964-1985),-The Committee was founded in 1964 to intensify the relations with Diaspora Armenians. In the Middle East the Committee faced serious problems of organizational and ideological character, as well as the problems related to the situation in communities and in the region. For example the Committee was not be able to solve directly the problems related to the diaspora communities. Its activity mainly depended on the Soviet committee for cultural relations with compatriots abroad. On the ideological level the Committee had to cooperate only with «progressive» organizations of Diaspora and struggle against the Armenian Revolutionary Federation.

The programs of the Committee were realized according to of the changing situation in the communities and in the region.

***Key words*:** Diaspora, Diaspora Armenians, committee, community, colony, problems, relations, progressive forces.